«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընթերցանության մեթոդիկան տարրական դասարաններում

Առարկան՝ *դասվար*

Հետազոտող ուսուցիչ՝ *Ռեհան Հովսեփյան*

Ուսումնական հաստատություն՝ *ՀՀ Արագածոտն մարզի Ագարակի Տ. Թերլեմեզյանի անվան միջնակարգ դպրոց*

Երևան 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ընթերցանության մեթոդիկան տարրական դասարաններում

Բովանդակություն

- Ընթերցանության մեթոդիկան տարրական դասարաններում
- Ներածություն
- Սահիկաշար
- Եզրակացություն
- Օգտագործված գրականության ցանկ

«Գիտուն հիմարը նա է, ով կարդացել աշխարհում ամեն բանի մասին և կարդացածը ուղղակի պահել հիշողության մեջ»:

Сканировано с CamScanner

Ընթերցանությունը գիտելիքների դռները բացող կախարդական բանալի է:

Հետազոտության ժամանակ, որպես հիմնական մեթոդ, կիրառել ենք բացատրակա
ընթերցանության մեթոդը՝ իր բաղադրամասերով (զրույց, բնագրի ընթերցում,
բառային աշխատանք, աշխատանք բնագրի շուրջ, պատմում, ամփոփում):

CS Сканировано с CamScanner

Ներածություն

Տարրական դասարաններում նպատակադիր ընթերցանության, նյութի բովանդակության ընկալման, վերարտադրման և սեփական կարծիքների ձևավորման առումով էական նշանակություն ունեն ուսուցչի կողմից առաջադրվող հարցերը: Դրանք ունեն համապատասխան ներգործություն և այդ կերպ այս կամ այն չափով խթանում են աշակերտների մտածողության զարգացումը:Սակայն գաղտնիք չէ, որ տարրական դասարանների ուսուցիչների մեծամասնությունն աշակերտներին ուղղում է հարցեր, որոնք լավագույն դեպքում հանգեցնում են տեքստի կամ դրանում առկա այլևայլ փաստերի մեխանիկական մտապահմանն ու վերարտադրմանը:Այս դեպքում աշակերտն ինքնուրույնաբար մտածելու հնարավորություն չի ունենում, և մտքի աշխատանքը հիմնականում ընթանում է մտապահման մակարդակում: Պարզ է, որ բացառապես փաստերին առնչվող հարցադրումներով հնարավոր չէ հասնել տվյալ տեքստի բովանդակության լիարժեք ընկալմանը: Բազմաբնույթ տեղեկատվության հեղեղում կողմնորոշվելու, կենսականորեն անհրաժեշտը զանազանելու,իմաստավորելու, կշռադատելու և այն արդեն առկա իմացություններին զուգորդելու կարողության մշակման նպատակով աշակերտին հարկավոր է դրդել բովանդակալից զրույցների ու

Сканировано с CamScanner

վիճաբանությունների: Ուսուցիչը նման խնդիրներ լուծելու համար նախապես պետք է մշակի իմաստավորված հարցադրումների մի ամբողջ համակարգ , որպեսզի կատարի հետազոտական աշխատանք:Այս ձևով անպայմանորեն ապահովելու է աշակերտների մտավոր գործունեության որակական ցանկալի մակարդակը, և նրանց համար լիովին պարզ է դառնալու, որ կյանքում ոչ միայն կարևորում են ուսուցչից ստացած, այլև իրենց իսկ սեփական մտքերն ու դրանց ձևակերպումները: Յուրաքանչյուր աշակերտ այդ դեպքում ի վիճակի կլինի նոր յուրացրածը կապակցել նախկինում կուտակած գիտելիքներին:Ուսուցիչը պարտավոր է աշակերտին մղել տեքստի բովանդակային խորքերը,որպեսզի նա իր համապատասխան ընկալումները զուգորդի կամ հակադրի ուսումնական գործընթացում կամ իրականության մեջ հանդիպող նմանօրինակ թեմաներին:

Այս ամենն ավելի արդյունավետ իրագործելու համար օգնում են հետազոտական աշխատանքները:

Մեր կրթական համակարգի հիմնական նպատակներից մեկը հասարակության համար պիտանի, ինքնուրույն, ստեղծագործող, որոշումներ կայացնող, ներդաշնակորեն հաղորդակցվող,ճիշտ կողմնորոշվող անհատի դաստիարակումն է:Այս նպատակին հասնելու համար դասարաններում պետք է ապահովել այնպիսի միջավայր, ուր հնարավոր լինի զարգացնել աշակերտների ինքնուրույն

CS Сканировано с CamScanner

մտածողությունը:Որպեսզի մարդը լիարժեքորեն հաղորդակցվի պետք է սկզբունքորեն տիրապետի կարողությունների մի ամբողջ շարքի:

- Կարողանա սահուն և հստակ ընթերցել ցանկացած տեքստ
- Կարողանա արագորեն և ճշտությամբ կողմնորոշվել հաղորդակցման պայմաններում
- Կարողանա իր խոսքը ճիշտ պլանավորել, կառուցել և շարադրել
- Ունենա ստեղծագործելու ունակություն:

Այս իրագործելու գործում մեծ է մեր՝ դասվարներիս աշխատանքը, որն առավել հանգամանալից կներկայացնենք հետազոտական աշխատանքի բովանդակության մեջ:

Հետազոտական ունակությունների ձևավորման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները.

<u>Համագործակցություն:</u> Հետազոտական ունակությունների զարգացման ուղղությամբ աշխատանքները պետք է տարվեն անընդհատ և՛ դասապրոցեսում, և՛արտադասարանական գործունեության ընթացքում:

<u>Դրդապատճառ</u> /<u>մոտիվացիա/:</u> Ուսուցիչն օգնում է աշակերտին հետազոտական գործունեության մեջ տեսնելու իր ունակությունների դրսևորման հնարավորությունները:

CS Сканировано с CamScanner

Հոգեբանական գործոն: Ուսուցչի խնդիրն է՝ աջակցել աշակերտների ստեղծագործական գաղափարների իրականացմանը:

Տարիքային առանձնահատկություն: Հետազոտությունը պետք է լինի հետաքրքիր և հնարավորինս իրականանալի: Երեխային հետաքրքրող թեմա ընտրելու համար հարկավոր է նրան լսել,ուսումնասիրել նրա հետաքրքրությունները:Հետազոտական աշխատանքը շատ երկարաժամկետ չպետք է լինի , որ երեխան օր առաջ տեսնի աշխատանքի արդյունքը:

CS Сканировано с CamScanner

Հետազոտական աշխատանքի համար ընտրել ենք Հովհաննես Թումանյանի «Ամեն լավ տունը» բանաստեղծությունը: Դասավանդումը իրականացրել ենք բացատրակ ընթերցանության մեթոդով:

CS Сканировано с CamScanner

Դասավանդումը իրականացրել ենք բացատրական ընթերցանության մեթոդով: Ինչպես վերևում նշեցինք, նախ իրականացնում ենք նախապատրաստական զրույց:

Ապա գրատախտակին գրել ենք վերնագիրը, որից հետո աշակերտներից յուրաքանչյուրը փորձել է բացատրել վերնագիրը, պատմել թե ինչի մասին կարող է լինել ստեղծագործությունը, և որն է իր պատկերացրած ամենից լավ տունը, ինչ նս կգրեր այս վերնագրի տակ:

CS Сканировано с CamScanner

Հաջորդ փուլը բառային աշխատանք է, երեխաներին հանձնարարվում է այնպիսի որը պետք է լրացվի՝

Ինչպիսին էր՝	
Խրճիթը	
Տղան	
Մայրը	

CS Сканировано с CamScanner

Նոր բառեր սովորելու համար երեխաներին հանձնարարում ենք լրացնել և մեկ այնական՝

Նոր բառ	Բացատրություն	Հոմանիշ
Հառաչել		
Եզերք		
Խրճիթ		

CS Сканировано с CamScanner

Բնագրի շուրջ աշխատանքը որպես ընթերցողական կարողության ձևավորման մի

Ո՞վ կամ ի՞նչը	
Ի՞նչ էր անում	
Ե՞րբ	
Որտե՞ղ	
Ի՞նչ պայմաններում	
Ի՞նչ էր մտածում	
Ի՞նչ եղավ	
Ինչո՞վ ավարտվեց	

CS Сканировано с CamScanner

Պատկերացրու որ՝

Ինչ էր մտածում տղան	
Ինչու	
Իսկ դու ինչ ես մտածում	
Որն է բանաստեղծության հիմնական գաղափարը	
Ես ինչ հասկացա	
Ի՞նչ պիտի անեմ սովորելուց հետո:	

CS Сканировано с CamScanner

Շատ կարևոր է հասկանալ՝ աշակերտը ինչ սովորեց: Այս ամենը կտանի երեխայի քննադատական, վերլուծական մտածելակերպի զարգացմանը:

Այնուհետև երեխաներին հարձնարարում ենք ներկայացնել բանաստեղծության կերպարների գործողությունները:

CS Сканировано с CamScanner

- Համեմատական աղյուսակի կիրառումը նպաստում է սովորողների վերլուծական մտածողության զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, ձևավորում է գնահատելու և եզրահանգումներ անելու կարողություններ:
- Կարդացած ստեղծագործությունը վերարտադրելիս պետք է հասնել նրան, որ երեխաները հարազատ մնան ստեղծագործության լեզվին: Անշուշտ, նախապես երեխաներին պիտի բացատրվեն անծանոթ բառերը և դրանց գրական համարժեքները:

CS Сканировано с CamScanner

Եզրակացություն

Ընթերցողական կարողությունները ձևավորում են աստիճանաբար և օգնում են աշակերտների մոտ ձևավորել ստեղծագործելու, պատմելու, բացատրելու, հաղորդակցվելու ունակություններ:Ճիշտ, հասկանալով ընթերցանությունը նպաստում է յուրաքանչյուր թեման ճիշտ ընկալելուն, ստեղծագործաբար մոտենալուն, հաղորդակցվելուն և շրջապատում իր դիրքն ու տեղը իմանալուն:Եվ ի վերջո ցանկացած առարկայի հիմքն ու ընկալումը ընթերցանությունն է:

CS Сканировано с CamScanner

- ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկան, Երևան 2015:
- 2. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980:
- 3. Ինչպե՞ս կարդալ տեքստ, մաս 1, բ.գ.թ. դոցենտ Թամարա Ալեքսանյան, https://youtu.be/T4DPDxcO628
- 4. Ինչպե՞ս կարդալ տեքստ, մաս 2, բ.գ.թ. դոցենտ Թամարա Ալեքսանյան, https://youtu.be/7y5LVKg-ToA

CS Сканировано с CamScanner

Ծնորհակալություն

CS Сканировано с CamScanner